

Սան-Պաուլոյում հայ գաղութի համար տեղի է ունեցել մեծ համերգ, որին մասնակցել են «երեսան» երիտասարդական եվագախումբը և հայկական պարերի շնորհալի կատարող Սոգո Չարըչյանը: Համերգը կազմակերպել էր «Թրա-գիլիա-Արմենիա» միությունը:

(«Մեան», Բուենոս-Այրես)

Ա. Ե. Գ. Ի. Ս.

Փարիզի «Աշխարհ» թերթը տեղեկացնում է, որ Սրաժնորդի համալսարանի հրատարակա-թյամբ տեղերեն լեզվով լույս է տեսել հայ եղանակով գրող Վահան Քոթովենցի «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա» վեպը՝ «Պատկերներ հայկական մանկության» խորագրով: Գիրքը հայերենից թարգմանել է Միշա Դյուլաշյանը:

Բուենոս-Այրեսում հրատարակվող «Սուր-հանդակ» թերթը հայտնում է, որ Լոնդոնում տեղերեն լեզվով հրատարակվել է Լ. Գուր-նովոյի «Հայկական մանրանկարչություն» գիր-քը:

Միացյալ Առաքական Ռեկոմբիկա

Կահիրեի օպերային թատրոնի շենքի սրա-հում աշխարհաճոշակ կոմպոզիտորների արձան-ների շարքում վերջերս դրվել է Արամ Խաչա-տրյանի կիսանդրին:

(«Աշխարհ», Փարիզ)

Այդպիսով լույս տեսան Ա. Սարգիսյանի ծագրանկարների երկու ժողովածուները՝ «Մենք մեր ակնոցով» (200 ծագրանկար) և «Տես խոս-քերդ» (134 ծագրանկար՝ հայկական առաջ-վածքների թեմաներով): Լույս է տեսել նաև Լ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ»:

անվանի ծագրանկարչի պատկերազարդումներով (10 մեծագիր գունավոր և 20 միագույն նկար-ներ):

(«Արև», Կահիրե)

Ի. Բ. Մ. Բ.

Քաղաքի Ազգային ժողովուրդի վարժարա-նի նախաձեռնությամբ հայ երիտասարդների ուսմանը բեմադրվել է Սրվանդ Սալանի «Չարըչյ» ներթին ազան» կատակերգությունը:

(«Փուլիս», Սամարայ)

Թ. Ո. Է. Բ. Ի. Ս.

Պոլսում տեղի են ունեցել հանգիստվոր հաճախներ՝ եվրոպա Պարտեզ, մանկական հանդեսի հիմնադրման 17-րդ տարեդարձին:

(«Փուլիս», Սամարայ)

Ի. Բ. Մ. Բ.

Ինչպես հաղորդում է Աթենքում հրատա-րակվող «Ներկիր» թերթը, մի խումբ թավջութ-գեղի հայեր նախաձեռնել են վերականգնել այն խաբիլված սուներ, որտեղ մեզի և ապրել է հայ մեծանուն վրպասան Բաթթին: Տուներ վե-րականգնվելու է իր նախկին վիճակով և վեր է ածվելու մշտական աշխույժայր:

(«Ներկիր», Աթենք)

«Փուլիս» ամսագրի վկայությամբ Բրանի կրեմատորիաֆիաքում լավագույն բեմադրողի հռչակ է վաչելում Սամվել Խաչիկյանը, որը 1962 թ. արժանացել է առաջին և երկրորդ կարգի մրցանակների:

(«Փուլիս», Սամարայ)

Վ. ԵՐԿԱՆՅԱՆ

2. ՀԱՅԱԴԵՍԱԿԱՆ ՀԲԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձյրունի պատմագիր: Հրատարակություն Զեյթունի Հայրենակցական միության, Ոոն-տեվիդեո (Ուրուգվայ), Բուենոս-Այրես, տպա-րան «Արարատ», 1960, 1150 էջ, նկարազարդ, մեկ քարտեզ:

Ժողովածուի առաջին մասում մանրամասն տեղեկություններ կան Զեյթունի անվան և նրա իմնարկության մասին, Հետարրքիր է աշխ-թունի անցյալից՝ բաժինը, որի մեջ ի մի են հավաքված հին և նոր ուսումնասիրություններ

դավառի պատմության վերաբերյալ: Ընդարձակ հոդվածներ կան Զեյթունի 1862 թ. հերոսական ապստամբության, վանքերի և ուխտատեղի-ների մասին: Գրքում կան ազգագրական հա-րուստ տեղեկություններ, նկարագրված են զեյ-թունցիների տարազները, նրանց սովորույուն-ները և զբաղմունքները: Ժողովածուում լայն տեղ է հատկացված Զեյթունի անցյալի վերա-բերյալ նյութերին, ոոոնո տպագրված են եղել «Իոունկ Հայոց աշխարհին», «Մասիս», «Հա-

յատառան», «Բյուզանդիոն», «Մուրճ», «Փունջ», պարբերականներում, ինչպես նաև ֆրանսիական և անգլիական թերթերում: Ժողովածուի առաջին մասում ընդգրկված են՝ ընդարձակ մի հատված Ղ. Ալիշանի «Սիսուան» ուսումնասիրությունից և սովետահայ պատմաբան Վասպուր Մելիքսեթյանի «Զեյթունի 1862 թ. ապստամբությունը» աշխատությունը, որը լույս է տեսել «Հայաստանի պետական պատմական թանգարանի աշխատություններ»-ի երկրորդ հատորում (էջ 193—278):

Ժողովածուի երկրորդ մասը հիմնականում նվիրված է Զեյթունին վերաբերող աշխարհագրական տեղեկություններին: Հայնորեն ներկայացված են Զեյթունի աշխարհագրական գիրքը, նրա բնությունը, կենդանական և բուսական աշխարհը, Զեյթունի նահանգի գյուղերը, նրանց կիման և այլ նյութեր: Այնուհետև նկարագրված է նահանգի տնտեսական պայքերը, արհեստներն ու այգեգործությունը:

Երրորդ մասն սկսվում է Հովհաննես Ա. հարոնյանի «Պատմություն Զեյթունի (1877—1915)» ծավալուն ուսումնասիրությամբ (էջ 461—672): Հեղինակը, որ ծնվել և երկար տարիներ ապրել է Զեյթունում, պատմական տեղեկություններին զուգընթաց հաճախ տալիս է նաև իր հուշերը՝ հետաքրքիր մանրամասնություններով: Այս գլխում են գետեղված նաև օտար մամուլում 1895—1896 թթ. լույս տեսած բուրբուր թուրքիայի ներքին զրույթյան և հայ-թուրքական ընդհանրումների մասին, ինչպես նաև եվրոպացի ճանապարհորդների գրքերից բաղված տեղեկություններ Զեյթունի վերաբերյալ:

Ժողովածուում գետեղված են գրական ստեղծագործություններ նվիրված Զեյթունին և զեյթունցիներին, առածներ և ասացվածքներ, կարճ պատմվածքներ, հուշեր, ինչպես նաև ստանձին հոդվածներ («Զեյթունի բարբառը», «Աշուղները», «Բառարան Զեյթունի բարբառին»): Տեղեկություններ կան նաև Զեյթունի կրթական և մշակութային կյանքի մասին: Պատմագրքի վերջում գետեղված է Արևելյան Կիլիկիայի քարտեզը:

Գույումենյան Մեսրոպ Կ., Բեդաճակ բառարան անգլերենի հայերեն: Կահիրե, տպարան Սահակ-Մեսրոպ, 1961, 1416 էջ, երկսյունակ, նկարազարդ:

«Ընդարձակ բառարան հայերեն անգլերեն» (Կահիրե, 1950) ծավալուն բառարանից հետո, սա հեղինակի երկրորդ լուրջ աշխատանքն է բառարանակազմության ասպարեզում: «Աշխատասիրողին գլխավոր նպատակը եղած է,—գրում է Գույումենյանը ներածության մեջ,—

պատրաստել զործ մը, որ ունենա այժմեական բնույթ: Թեև ոչ մեկ բառարան կրնա կատարյալ լլլալ սակայն այստեղ ամեն ճիշդ ի զործ զրված է այս աշխատասիրությունը դարձնելու այնքան ընդարձակ ու արդիական, որքան հնարավոր է: Հեղինակը չունի անսխալական լլլալու հավակնությունը, և հավանական է սխալներ վրիպած լլլան մանրակրկիտ ըննությամբ»:

Բառարանում ընդգրկված են նորակերտ բառեր, որոնք անգլերեն լեզվում սկսել են օգտագործվել XX դարի առաջին կեսում: Անգլերեն, հատկապես խոսակցական լեզվում օգտագործված, հատկաբանությունների իմաստը, բառերի ճշգրիտ թարգմանությունը և նախադասությունների նշանակությունը լրիվ և ստույգ բերանելի դարձնելու նպատակով բառարանում մասնավոր ուշադրություն է դարձված հատկաբանություններին: Բառարանի վերջում կցված է «Օտար նախադասություններ, ասացվածքներ, առածներ և մեջբերումներ՝ իրենց թարգմանություններով» բաժինը, որտեղ կան 600-ից ավելի ասացվածքներ և նախադասություններ լատիներեն, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն և հունարեն լեզուներով: Իրոքն ունի նաև համառոտագրությունների և օգտագործված հանգրվան և անգլերեն լեզուներով բառարանների ցանկեր:

Ոսկյան Համազասպ, Գուգարի վանքերը. Վիեննա, Մխիթարյան տպարան, 1960, 368 էջ, նկարազարդ (Ազգային Մատենադարան ՃԶԸ):

Այս գիրքը 1957—1959 թթ. «Հանդես մասորայում» հայկական վանքերի մասին Հ. Ոսկյանի հրատարակած հոդվածների արտատպությունն է: Հեղինակը տեղեկություններ է տալիս Գուգարի երեսուցից ավելի վանքերի մասին, մանրամասն նկարագրում է վանքերը, նրանց արձանագրությունները:

Համեմատաբար հանգամանորեն են ուսումնասիրված Սանահինի կամ Ս. Աստվածածնի վանքը և Հաղրատի վանքը (էջ 58—334): Այդ վանքերի մասին ընդհանուր տեղեկություններ տալուց հետո, հեղինակը զգալի տեղ է հատկացրել պատմագիրների և ժամանակագիրների տվյալներին, արձանագրություններին, ինչպես նաև Սանահինի վանքի առաջնորդների, զոլոցի, նրա կալվածքների և գույքերի նկարագրություններ: Գրքի վերջում գետեղված է հատուկ անունների այբբենական ցանկ (էջ 335—365):

Թագավազյան Ժորժ, Բառարան արաբերենի հայերեն: Բեյրութ, տպարան Ատլաս, 1960, 515 էջ, երկսյունակ:

Քառարանը բովանդակում է չորս 25 000 արարերին բառ նկատի ունենալով արարերին լեզվի զգալիությունները, բառարանում ընդգրկված բոլոր արարերին բառերը շեշտավորված են, նշանակված են նրանց հոմանիշները, հոգնակները և բայական ձևերը՝ կրճատական

բայերը ցույց են տրված աստղանիշներով, որոնցից հետո արված են ածանցումները։ Բառարանում տպագրված է նաև համառոտագրությունների ցանկ՝ հայերեն և արարերին լեզուներով։

Հ. ՄԵՔԵՐՅԱՆ

3. ՀՈՒՇԱԳՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Անդրանիկ Անդրեասյան, Խոնե (գրական-հասարակական), Քեյրուիթ, հրատարակչություն «Անի», 1961, 258 էջ։

Գրքում ամփոփված են հեղինակի գրականագիտական ուսումնասիրություններն ու հոգվածները, ինչպես նաև հանապառենական երկերը «Գաղութահայ գրականության մասին» հետազոտությունը նվիրված է 1920—1948 թթ. սփյուռքահայ գրականության դարգացման հարցերին։ «Ազգային գրականության մեջ», «Գրական ներշնչումներու աղբյուրները» հոգվածներում հեղինակն անդրադառնում է գրական վարպետության խնդիրներին։ «Խոնե» գրքում զետեղված են նաև գրական-կենսագրական հակիրճ ակնարկներ՝ նվիրված Մ. Խոնեհաղուն, Խ. Արսլանյանին, Հ. Քումանյանին, Վ. Տերջանին, Գ. Ջահրապյանին, Վ. Քերեյանին և այլ գաղական գրողներին։ «Դեպի Հայաստան» խորագրով ուղեգրությունը պատմում է 1936 թ. Սովետական Հայաստան հեղինակի կատարած առաջին ուղևորության մասին։

Հաբուրյան Պարույան, Հուլիս Քումարգանյան, Քեյրուիթ, տպ. Տոնիկյան, 1960, 290 էջ։

Գրքում կարելի է գտնել ազգագրական, պատմա-աշխարհագրական տեղեկություններ ու տվյալներ Կեսարիայի Քումարգանյանի վերաբերյալ։ Հուլիսյանը զգալի տեղ է հատկացված Քումարգանյանի տարածում գտած տարազների, տնային իրերի, ինչպես նաև ազգային-կուլտուրային ամբողջությունների, նիստուկացի, վանքերի, կրթական-կրոնական կյանքի նկարագրությունը։

«125 տարի ի սպաս ժողովրդական լուսավորության»։ Պլովդիվի Ստեփան Եանուզյանի անվան պետական հայկական գրողների հիմնադրման 125-ամյա հոբելյանին նվիրված ժողովածու (կազմեցին՝ Կ. Ասադրյան, Մ. Համբարձումյան, Բ. Քյուֆեհյան), Սոֆիա, 1959, 64 էջ։

1959 թ. լրացավ Պլովդիվի հայկական գրողների հիմնադրման 125 տարին։ Այդ հոբելյանը հանդիսացավ ամբողջ բուլղարահայ գա-

ղութի մշակութային տոնը։ Այս գիրք-ալբոմի մեջ հավաքված են գրողների պատմությունն ու երկերային վերաբերող նյութեր, հոբելյանի առթիվ գրված հոգվածներ, հուշեր, ողբեր, հետագրեր ու նամակներ, գրողների նախկին ուսուցիչներին ու նշանավոր ասաների անվանացանկեր, ինչպես նաև բազմաթիվ լուսանկարներ։

Գիրքը բացվում է Ստ. Եանուզյանի «Խոնե»-ից։ Գործունեությանը նվիրված հոգվածով Հուլիս է գրողների մանկապարտեզի (հիմնադրված 1894 թ.) վարիչ Մ. Քեչեկյանի «Կարմիր ծաղիկ» խորագրով հուշը, ուր պատկերված են մանկապարտեզի մասյ անցյալը և պայծառ ներկան։ Գրողի 1896 թ. շրջանավարտ, բուլղարական կոմպարտիսի ակադեմիա զործիչ Ստեփան Եանուզյանի կյանքին ու հերոսական գործունեությանը է նվիրված «Մեր պարծանքը» հոգվածը։ Ստ. Եանուզյանը հերոսի մահով զոհվել է 1923 թ. Սեպտեմբերյան ժողովրդական ապստամբության մամանակ։

«Հնուավոր անցյալը» հոգվածը բնագրվում է գրողների պատմությունը՝ հիմնադրման սրբանից (1834) մինչև 1878 թ.։ Հոգվածում հետաքրքրական պատմա-ազգագրական տեղեկություններ կան Պլովդիվի հայ հին գաղութի մասին։ Գրքույկը փակվում է սովետահայ արձակագիր, գրողների նախկին ուսուցիչ Հրանտ Հրահանի «Գաղափարական պայքարի և ազգային գաղափարականության միջնաբերդը» հոգվածով։

ժամկետյան Բ. Ա., Տպագրություններ միամյա շրջապատյան, հրատարակչություն Սահակյան քարձրագույն վարժարանի, Քեյրուիթ, 1958—1959, 479 էջ։

Գրքում ամփոփված են մանկավարժ Բենիամին ժամկետյանի հանապառենական երկերը 1956—1957 թթ. Հարավային Ամերիկայում կատարած շրջադարձային ճանգրձով։ Ուշագրավ տվյալներ և տեղեկություններ կան էստրադային Ամերիկայի հայ գաղութների կրթական, մշակութային, ազգային-նկերչական կյանքի, հայրենակցական միությունների վերաբերյալ։

Ա. ԲԱՅԲԱՄՅԱՆ